



ԻՆՉՊՈՆՍ ԱՐՁԱՉԱՆՔԵԼ ԿՈՐՍՏԻ ՂԵՊՁՈՒՄ ՆԱԽԱՂՊՐՈՅՎԱԿԱՆ ԵՐԵՏԻԱՅԻՆ

Նախադպրոցական տարիքի կորուստ ապրող երեխային մեծահասակների արձագանքման նպատակահարմար եղանակներն են՝

- ընդունել երեխայի կարոտը, խոսել նրա և սեփական զգացմունքների մասին,
- ընդունել, որ երեխայի զգացմունքները կարող են փոփոխական լինել,
- հստակ ձևակերպել կորստի հետ կապված պատկերացումները («չի վերադառնալու», «կենդանի չէ» և այլն,
- առավելագույն ապահովություն տալ երեխային,
- ընդունել երեխայի հոգեբանական պաշտպանությունները, ռեգրեսիվ

նշանները (եղունգներ կրծելը, մանկամտանալը, կամակորոպությունը),

- փորձել փափուկ ձևով վերադարձնել առօրյա գործունեությանը,
- բացատրել մահվան երևույթը պարզ, հասկանալի հասկացություններով, բնության, հեքիաթների, մուլտֆիլմերի օրինակներով
- ընդունել, որ երեխան կարող է չցանկանալ խոսել մահացածի մասին,
- վստահեցնել, որ երեխան կատարվածում որևէ մեղավորություն չունի,
- մահացածի հետ կապված իրերը (անձնական պարագաները) թողնել երեխայի համար հասանելի տեղում:

ԻՆՉՊՈՆՍ ԱՐՁԱՉԱՆՔԵԼ ԿՈՐՍՏԻ ՂԵՊՁՈՒՄ ՂՊՐՈՅՎԱԿԱՆ ԵՐԵՏԻԱՅԻՆ

Դպրոցահասակ երեխաներին արձագանքման նպատակահարմար ձևերն են՝

- խոսել սեփական զգացմունքների մասին, խրախուսել երեխային՝ խոսելու իր տարաբնույթ ապրումների վերաբերյալ,
- համբերատար լինել վարքային ռեգրեսիվ դրսևորումների հանդեպ, փորձել երեխային մոտեցնել առօրյա գործունեությանը,
- գիտակցել, որ իրողությունը կարող է կայուն մտքերի տեսքով հետապնդել

երեխային, պարբերաբար օգնել նրան լիցքաթափ վել,

- ներշնչել ապահովություն, վստահեցնել, որ կողքին շատ մարդիկ կան, ովքեր կանգուն են,
- խոսել անհանգստացնող մտքերի մասին՝ զերծ պահելով երեխային երկրորդային տրավմաներից (թերի կամ մեղավոր լինելու մտքերից),
- չպարտադրել խոսել մահացածի մասին, բայց և բաց լինել խոսելու՝ ցանկության դեպքում («Երբ ուզենաս խոսել, ես այստեղ եմ»):





ԻՆՉՊՈՆՍ ԱՐՁԱՎԱՆՔԵՆԸ ԿՈՐՍՏԻ ՂԵՊՁՈՒՄ ՂԵՌԱՀԱՍԻՆ

Դեռահասության տարիքի երեխաներին տրվող արձագանքներում նպատակահարմար է՝

- լինել չափազանց համբերատար, օգնել վերադառնալ առօրյային, սովորական գործունեությանը,
- խոսել սեփական մտքերի, զգացմունքների մասին, լսել դեռահասին,
- խրախուսել շփումը հաճելի մարդկանց հետ, առաջարկել լիցքաթափող գործունեություններ՝

զբոսանք, կինոդիտում, մարզասրահի հաճախում և այլն,

- խոսել սթրեսին դիմակայելու, անվտանգ կյանք վարելու մասին, հուզական ինքնակարգավորման եղանակների մասին
- տալ ճշգրիտ, տարիքին համապատասխան տեղեկատվություն մահվան պատճառների և փոփոխված իրականության վերաբերյալ,
- համբերատար լինել դեռահասի մերժողական, երբեմն՝ ագրեսիվ վարքի հանդեպ:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

